# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/117-25

<<25>> հուլիսի 2025թ — ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ «ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ*

*Նախագծող՝ <<ԹԻՎ 28 ՇՄՇ >> ԲԲԸ*

*Տնօրեն՝ Թ. ԳԱՓՈՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի «ուսումնական կենտրոն» մասնաշենքի 1-ին հարկում նոր հանրակացարանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ **152 511.348** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

տնօրեն Ն. Սիրեկանյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի «ուսումնական կենտրոն» մասնաշենքի 1-ին հարկում նոր հանրակացարանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր

Պատվիրատու՝ «ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

Նախագծող՝ <<ԹԻՎ 28 ՇՄՇ >> ԲԲԸ

Տնօրեն՝ Թ. ԳԱՓՈՅԱՆ

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի «ուսումնական կենտրոն» մասնաշենքի 1-ին հարկում նոր հանրակացարանների կառուցման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների կատարում, շինարարական աղբի բարձում և տեղափոխում: Միջնորմների կառուցում տուֆե շարվածքով և թեթև բետոնե բլոկներով՝ ամրանավորմամբ: Հատակները երեսապատվում են լամինատե, պրեսգրանիտե և խեցեսալե սալերով՝ ներառյալ շրիշակները: Պատուհանները իրականացվում են մետաղապլաստե պատուհաններով՝ բացվող և չբացվող մասերով, պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում, մետաղապլաստե և ալյումինե դռների տեղադրում: Ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ պատերի և առաստաղների սվաղում, նեիկում լատեքսային ներկով և յուղաներկով, պատերը երեսապատվում են հախճասալիկներով, կախովի առաստաղների իրականացում: Արտաքին հարդարման աշխատանքների իրականացում: Նախատեսվում

է իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր՝ սանիտարական սարքերի տեղադրում: Էլեկտրալուսավորության ցանցերի անցկացում, լուսատուների, անջատիչների և վարդակների տեղադրում: Ջեռուցման և օդափոխության համակարգի անցկացում: Հակահրդեհային և տեսահսկման համակարգի անցկացում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է **152 511.348** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2425.27** և մեքենաների շահագործման ինդեքսը **3002.27**

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. N 05 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն*** ***Ն. Սիրեկանյան***

***Փորձագետ*** ***Տ. Վիրաբյան***